

գլխուն բարձրուիլը քսանըվեց ոտնա-
չափ էր, և կզակէն ինչուան ականջը
տասնուհինգ ոտնաչափ միջոց կար :
Պինիոս երէցն, որ նոյն Սփինքսին
ստորագրութիւնը գրած է, կ'ըսէ թէ
գլխոյն շրջապատը հարիւր երկու ոտ-
նաչափէն պակաս չէր, և արձանին
բարձրութիւնը՝ փորէն ինչուան վեր՝
վաթսուներկու ոտնաչափ էր, իսկ
ամբողջ մարմնոյն երկայնութիւնը՝
հարիւր քառասունուհինք ոտք էր :

Կարծիք մը կայ՝ թէ աս Սփինքսը
Եգիպտացւոց Բմասիս թագաւորին
գերեզմանն է եղեր . իսկ Բմասիս
թագաւորեց՝ Վրիստոսէ հինգհա-
րիւր վաթսուներկու տարի առաջ :
Ղանապարհորդները կը զմայլին աս
կարգէ դուրս արձանին փորուածքին
վրայ . ափսոս որ բարբարոս ժողո-
վուրդներ ասոր քիթը կոտորեցին :
Թէպէտ և աս արձանին ամէն կտոր-
ներն ալ հսկայաձև են, բայց ձևը
վայելուչ է և շէնքը մաքուր է, նայ-
ուածքը անոյշ, ու կեցուածքը հան-
դարտ . իսկ դէմքը ափրիկեցիի դէմք
է . միայն բերանը թանձր շրթունքո-
վը հանդերձ՝ խիստ զարմանալի է գե-
ղեցկութեանը ու վարպետ փորուած-
քին կողմանէ . կարծես թէ իրօք միս
է : Կ'երեւնայ թէ արձանագործութիւնը
շատ առաջ գնացած ժամանակը փո-
րուեր է աս Սփինքսը . վասն զի թէ-
պէտ և մաշած են վրայի ան բարակ ու
սիրուն գիծերը՝ որոնք մեծ կենդա-
նութի կուտան արձաններուն, բայց
անով ալ աղուորութիւնը՝ պարզու-
թիւնը և բնականութիւնը սքանչելի
կերպով աչքի կը զարնեն :

Պեղոնի անունով հռչակաւոր ի-
տալացին՝ քանի մը Լորաբացւոց օգ-
նութեամբը Սփինքսին քովի բուրգե-
րուն խարխիսներուն վրայէն շատ ա-
ւազ մէկգի առաւ, որով Սփինքսին
ալ մեծ մասը բացուեցաւ, ու վրան
շատ հետաքրքրական բաներ տես-
նուեցան : Երկու սրունքներուն մէջ
տեղը միակտուր քարէ չափաւոր ընդ-
արձակութեամբ առաջար մը գտնուե-

ցաւ, ուրիշ մըն ալ արձանին ճանկե-
րուն տակը գտնուեցաւ : Լորձանին
դիմացը եղած երկրին վրայ յու-
նական ոճով լեցուն շինուածքներ
կան՝ անթիւ արձանագործութիւննե-
րով, որոնցմէ կ'իմացուի թէ որչափ
կայսերք ու երևելի մարդիկ ան հրա-
շալի արձանը տեսնելու եկեր են :

Ես հսկայաձև Սփինքսը, որ մէկ
տաճար մը երկու սրունքներուն մէջ՝
ուրիշ մըն ալ ճանկերէն մէկուն մէջ
ունի, կ'երեւնայ թէ այսպիսի ցուցան-
քը այլաբանօրէն Եգիպտոս կը նշա-
նակէ, իբր թէ հասկըցնելով որ Ե-
գիպտացիք մեծ հոգ ունին իրենց աւ-
տուածներուն պաշտօնը պահելու ու
չխափանելու :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նախնիք :

Թէպէտ Նափուէոն Պոնափաւ-
թէին անունը աշխարհիս ամէն կող-
մը հռչակուած է, բայց ամէն մարդ
չգիտեր իրեն պատմութիւնը . ուստի
շատ հաճոյ բան կ'ընենք անշուշտ ու-
սումնասիրաց՝ թէ որ աս մեծ աշխար-
հակալին վարքը համառօտենք օրա-
գրիս մէջ : Սիայն թէ ան պատմու-
թիւնն որ բազմահատոր գրքերու
նիւթ է՝ երկու իրեք երեսի մէջ ամ-
փոփել ուզողը՝ հարկաւ ցամաք ոճ մը
կ'ունենայ, և իր վախճանին չկրնար
հասնիլ . անոր համար մեզի կ'երեւնայ
թէ լաւ կ'ըլլայ որ հոս առաջ ամ-
բողջ տեղեկութիւն մը տանք Նա-
փուէոնին վրայ՝ ամենահամառօտ ո-
ճով, ետքը ուրիշ անգամներ ամբողջ
վարքն ալ մէկ քանի յօդուածով կը
դնենք :

Նափուէոն Պոնափաւթէ ծնաւ
Վորսիքա կղզիին Լայչիոյ քաղաքը
1769^{ին}, օգոստոսի 13^{ին} : Իր հայրը
Վորսիքայի ազնուականներուն կող-
մանէ պատգամաւոր եկած ըլլալով

Վաղղիոյ թագաւորին 1779^{ին}, հետը բերաւ նաեւ իր որդին՝ Վափուէոնը, ու Պրիէն քաղաքին դպրոցը դրաւ . հոն Վափուէոն շատ յառաջացաւ ուսման մէջ : Տասնըչորս տարեկան եղած տաւեն Փարիզու զինուորական դպրոցը մտաւ . հոն ալ խիստ մեծ յարմարութիւն ցցուց մաթեմատիկական ուսմանց : Վաղղիայի խռովութեան ժամանակը ինքն ալ բանի մէջ մտաւ, ու 1792^{ին} զօրագլուխ եղաւ : Եւսուին քաղաքը ան միջոցին զՈւգուիկոս Ժէ իրեն թագաւոր դնելով՝ ինքզինացուց ձեռքն անցեր էր . Պոնափաութէն վարպետ հնարքներով ու մեծ քաջութեամբ առաւ քաղաքը, ու աւելի յառաջացաւ աստիճանին մէջ : Խառնայի բանակին զօրապետ դրուելէն ետքը՝ ալ աւելի հռչակուեցաւ Վափուէոնին անունը շատ յաղթութիւններով : Վաղղիացուց գլխաւոր թշնամիներուն մէկն ալ ան տաւեն ինքզինացուց տէրութիւնն էր . Պոնափաութէն միտքը դրաւ որ հընդկաստանի կողմէն զարնուի անոնց հետ . ուստի առաջարկեց ազգային ժողովոյն որ առաջ խզիպտոսն առնելու ետեւէ ըլլան : Եւ ի բերան շատ աղէկ գնաց աս աշխարհակալութիւն՝ այնպիսի քաջ զօրավարի ձեռքով . բայց ինքզինացուց Վաղղիացուց զարնուեցաւ Վաղղիացունաւատորմին հետ Վուլքիր քաղաքին քովն ու ցիր ու ցան ըրաւ . ան տաւենէն սկսան Վաղղիացիք տկարանալ, ու վերջապէս պէտք եղաւ որ Պոնափաութէն ետ դառնայ : Նամբան թէպէտ ինքզինացիք շատ ջանացին Վափուէոնը փորձանքի մը բերել, բայց անիկայ անշնաս հասաւ Վաղղիա այնպիսի տաւեն՝ որ երկրին կառավարութեան ոյժը տկարացեր էր, իսկ ինքը փառաւոր յաղթութիւններով մեծ անուն հաներ էր : Եւ որքա՞նք քաղաքական պատերազմը նորէն բորբոքեցաւ Վաղղիայի մէջ, ու Ռուսները Խառնայի մէկ կողմը կոխեցին, Վաղղիացիք նեղը մտած՝ նոր տեսակ կառավարութեան մը ձեռք զարնել ուզեցին : Ինչ առթով Վափուէոն շուտով համոզեց զամենքն որ հիւպատոսական կառավարութիւն դառնայ ռամկապետութիւնը, և ինքն եղաւ առաջին հիւպատոս 1804^{ին}, անկէ ետքն ալ կայսր : Ինչ տաւենէն ինչուան 1812 մեծամեծ յաղթութիւններով, անբաւարին թափելով, գրեթէ բոլոր Եւրոպայի տէրութիւնները տակնուվրայ ըրաւ, ու իր իշխանութեան տակը ձգեց . իսկ ան տարին Ռուսաց վրայ որ գնաց, իր բանակին մեծ մասը ցուրտէն ջարդուեցաւ, ինքն ալ մնացածներուն հետ դարձաւ Փարիզ : Եւսով սիրտ առին Եւրոպայի դաշնակից տէրութիւնները, ու Վափուէոնը Վալպա կղզին քշեցին . 1815^{ին} փախաւ անկէ ու փառաւոր յաղթանակով Փարիզ մտաւ : Իսկ դաշնակից տէրութիւնները նորէն ելան իրեն դէմ . Սափերլոյի պատերազմին մէջ բռնեցին, ու քշեցին արեւելեան Սկիա նոսին մէջ սուրբ հեղինէ ըսուած կղզին . հոն մեռաւ 1821^{ին}, մայիսի 5^{ին} : Սրան տասը տարի անցնելէն ետքը Վաղղիացիք Վափուէոնին մարմինը հանեցին անկէ ու մեծ հանդիսով բերին Փարիզու մէջ մասնաւոր մատուռի մը մէջ թաղեցին :

Իսկ համառօտ պատմութեանէն ետեւ կը վայլէ որ դնենք Սափանտի անունով մեծանուն իշխանին ու մատենագրին մէկ հատուածը, որ շատ վսեմ ու բանաստեղծական է .

«Վափուէոն Պոնափաութէ դիւցազն է մերոցս ժամանակաց . և յորժամ դիւցազն ասեմ, ըստնախնեացն առաջնոց իմանամ ես, այր հանգունատիպ վեհիցն այնոցիկ՝ որ զաստուածականն գոգցես ընկալան յերկրի զպատիւ . լցաւ աշխարհ ամենայն գործովք արութեան նոցա . անջինջ տպաւորեալ կացին մնացին ի միտս մարդկան յիշատակք նոցա ազգաց յազգս, և փառաւորեցան դարուց ի դարս, զի մե-

«Վափուէոն Պոնափաութէ դիւցազն է մերոցս ժամանակաց . և յորժամ դիւցազն ասեմ, ըստնախնեացն առաջնոց իմանամ ես, այր հանգունատիպ վեհիցն այնոցիկ՝ որ զաստուածականն գոգցես ընկալան յերկրի զպատիւ . լցաւ աշխարհ ամենայն գործովք արութեան նոցա . անջինջ տպաւորեալ կացին մնացին ի միտս մարդկան յիշատակք նոցա ազգաց յազգս, և փառաւորեցան դարուց ի դարս, զի մե-

,, Ժամեծս յոյժ գործեցին քան զմար-
 ,, դոյ կարողութիւն , և պատճառս
 ,, այնու ետուն առասպելեացն ստեղ-
 ,, ծաբանութեանց . վասն որոյ և յի-
 ,, րաւի է իմաստնոյ 'ի կարծիս կաս-
 ,, կածանաց անկանել , եթէ արդարեւ
 ,, կայեալ իցէ երբէք Հերքիւլէս ոք
 ,, և կամ Սեսոստր և Հուսուլոս , որ
 ,, ընդ ամենայն տեղիս դովին հռչա-
 ,, կաւ : Եթէ յանկարծ անհետաս-
 ,, ցին երբեմն ուրեմն կարգք քաղա-
 ,, քականք յերեսաց երից մասանց աշ-
 ,, խարհիս , և նշխարեալ մնացենք եւ-
 ,, թածք և երգարանք և պատմուիք
 ,, և պատկերք պղնձիք , և դերբուկք
 ,, աւերակաց , և յընդ աղօտ ժմկս
 ,, աւերածացն այնոցիկ հարկանիցի
 ,, յաչս վիպասանին նոյն և մի անուն
 ,, արձանագրեալ և 'ի վիմին որ յԵս-
 ,, կուրիալ՝ և 'ի մարմարիոնին որ 'ի
 ,, Վապիտու , և 'ի բրգունս որ յԵգիպ-
 ,, տոս , նոյն դարձեալ անուն յաւե-
 ,, րակս Շէնպրունայ՝ , Ռոցտամայ և
 ,, Վրեմիւնոյ՝ , որ և ընդ աւազովք
 ,, անհուն անապատին , որպէս ար-
 ,, դեօք և կամ զիւրդ հաւատարիմ
 ,, լինիցի նմա՝ եթէ միոյ և եթ աշ-
 ,, խարհակալի , միոյ և եթ միահե-
 ,, ծան ինքնակալի իցէ այն անուն ,
 ,, անուն գերագոյն օրէնսդրի և քա-
 ,, ջամարտիկ թագաւորի : Իցէ բնաւ
 ,, կարծելի տիեզերակալութիւն այսպի-
 ,, սի , և այսգունակ փոփոխութիւն աշ-
 ,, խարհիս կերպարանաց 'ի ձեռաց
 ,, միոյ առն , այսչափ ազգաց այլափո-
 ,, խութիւն , և այսքան ցեղապետու-
 ,, թեանց 'ի տասնամեայ ժամանակի
 ,, քակտումն և հաստատութիւն : Ո՞ր
 ,, ոք երբէք դիւրահաւան լինիցի այն-
 ,, չափ յաղթութեանց անթուելեաց ,
 ,, այնչափ անհուն աշխարհակալու-
 ,, թեանց , միանգամայն և այնչափ
 ,, բարգաւաճելոյ արուեստից , յար-
 ,, դարելոյ ճանապարհաց , տաճարաց

1 Հռչակաւոր և մեծաշէն մենաստան 'ի Սպա-
 նիա . որ և ամարանոց է թագաւորաց աշխարհին :

2 Ամարանոց կայսերն Վաստրիոյ մերձ 'ի Վեն-
 նա :

3 Տես յերես 199 :

,, շքեղացելոյ , կամրջաց կառուցելոյ ,
 ,, ճեմարանաց կանգնելոյ , միանգա-
 ,, մայն և Նիվերսայ՝ պեղելոյ և Նի-
 ,, պեան լերանցն հարթելոյ՝ : Իսկ
 ,, զի՞նչ ինչ ասել իցէ և զառաւելա-
 ,, գունիցն կերտուածոց . զսահմա-
 ,, նադրութեանց , զմատենից օրինաց ,
 ,, և զկարգաց քաղաքականութեան ,
 ,, յորս բովանդակին կեանք և քա-
 ,, ղաքավարութիւն ազգաց և ժո-
 ,, ղովրդոց . և այսոքիկ վաղ ընդ
 ,, փոյթ զկնի համայնաջինջ խռովու-
 ,, թեան , և 'ի ժամանակի անդու-
 ,, մարտից պատերազմաց անհետ 'ի
 ,, վերայ եկելոց : Եւ ուրք պանծասցի
 ,, 'ի մի միաբանութիւն ածել ընդ
 ,, այնչափ իշխանութեն և զաղէտն
 ,, անհնարինս , ընդ այնչափ արութեն
 ,, և զկործանումն ահագին , ընդ այն-
 ,, չափ փառացն զթողուլ լքանել 'ի
 ,, մարդկանէ . այլ և 'ի լքանել անդ՝
 ,, զտագնապ թագաւորաց , և զգաշ-
 ,, նակցութի Նարոպայ համօրէն առ
 ,, անձանց զգուշանալոյ յերեսաց միոյ
 ,, և եթ առն , զՎիկիան ինքնին նմին
 ,, կարգեալ պահանջորդ . քանզի և
 ,, ոտնփոխ մի նորա շատ էր 'ի տատա-
 ,, նել զաշխարհս . զարտասահմանու-
 ,, թիւն նորա 'ի վէմն ապառաժուտ
 ,, հանդէպ Նգամաստորայ հօկային՝ ,
 ,, և զտագնապ մահու նորոյն Պրո-
 ,, միթեայ՝ . որք առ հասարակ գնախ-
 ,, նեացն առասպելեաց քան թէ ըզ-
 ,, պատմութեանց բերեն զկերպա-
 ,, րանս : Ո՞րպէս արդեօք 'ի գրի հար-
 ,, ցեն պատմաբանք ժամանակաց ըզ-
 ,, մահ՝ Վափոլէոնի զանյայտն և զան-
 ,, զօր՝ հանգոյն ծննդեան նորին . ուր
 ,, և զկնի բազմամեայ ժամանակաց
 ,, այնչափ հզօր է անուն նորա , մինչև

1 Ն. յնչափ ընդարձակ է նաւահանգիստ քաղա-
 քիս , մինչև տանել նաւս հաղար և աւելի :

2 Ուղին Սեմիլոնայ յԱլպեանսն հատեալ յամս
 վեց՝ մի է 'ի հրաշակերտից մարդկեղէն հանձարոյ :

3 Անուն ստեղծաբանեալ 'ի Գամեկնսէ յիւրումն
 դիւցազնական քերթուածի :

4 Պրոմիթէս ըստ առասպելեաց՝ հուր յերկնից
 գողացեալ 'ի հոգեւորել զմարդ հողակերտ , յԱրա-
 մազայ հրամայի կաշկանդիլ 'ի Վովկաս :

„ մեծացուցանել զայր որ զնա մեծա-
 „ րիցէ, և կազդուրել զթագաւոր՝ որ
 „ ի գլուխ անցեալ ժողովրդոց բազ-
 „ մաց մատչի ի պատուել զանդրին
 „ կանգնեալ վասն նորա . ուր և նո-
 „ քին իսկ որ ի վսեր ընդ նմա եկին՝
 „ ելեւել զմիմեամբք առնեն ի պաշ-
 „ պանել զյիշատակ նորա, իբր զմը-
 „ ցանակ յաղթութեան, և իբրու
 „ զէն և զասպար . հանգոյն գողցես
 „ նահապետացն Հելլենաց որ զգէնան
 „ Լքիլեայ առ ի միմեանց կորզէին :
 „ Հոմերական է աստանօր Կամ . ամե-
 „ նայն ինչ ահագին, Կամ ինչ զարմա-
 „ նալի է յաջ առն՝ որ դէտակն կա-
 „ լեալ ուշ ունիցի ընթացից կենաց
 „ քաջիս անդստին ի կղզւոյ անտի
 „ յորում խանձարեցան՝ մինչև ի
 „ կղզին յոր զթաղումն ընկալաւ . ար-
 „ դարե վարսամ գեղափայլ և ահար-
 „ կու, որ առ ի ծագելոյ յարեւել
 „ և յարեւմուտս առ հասարակ, ի
 „ խորոց ծովու ի վեր ամբարձեալ
 „ ի նոյն դարձ առնէ խորասուզեալ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Լնցած տարւոյն հոանքը :

Լքին մարդ բան ժողովելու հետ է,
 և ամէն տեղէ բան կը ժողովուի, ամէն
 տեղէ բան կը քաղուի . մշակը գետնէն
 կը քաղէ, հովիւը հօտէն, ձկնորսը ծռ-
 վէն, վաճառականը զանազան աշ-
 խարհքներէ, տնկագործը հողէն, հան-
 քագործը երկրիս խորունկէն, խա-
 նութպանը շուկայէն, զինուորը դաշ-
 տէն, թագաւորը ժողովրդէն, ժողո-
 վուրդը օտարներէն, հարուստը աղքա-
 տէն, աղքատը հարուստէն, իմաս-
 տունը գրքէն, տգէտը իմաստունէն,
 և այլն : Լայց ան Եսովպոսի արծիւին
 նման՝ որ որսող կենդանին ալ որսին
 հետ մէկտեղ յանկարծ նոր որս մը
 ըրաւ, խլեց վերուց տարաւ, մէկն ալ
 կայ որ անդադար մարդիկը խլելու

հնձելու հետ է : Լնցնքը իմացան որ
 ասիկայ ժամանակն է, և իր գերան-
 դին մահն է, որ ամէն կողմէ՝ ամէն
 չափէ հունձք կը ժողվէ, տարուան մը
 շալակը կուտայ, երկրիս սահմանէն
 դուրս կը հանէ, յաւիտենականու-
 թեան գաւառը կը խրկէ, ուսկից
 դառնալ չըլլար :

Լնցած տարին ալ որչափ հունձք
 տարաւ . որչափ մարդիկ տարեր է հե-
 տը : Ով կրնայ նոյն տարուան գար-
 նան մէջ բացուած ծաղկները, կամ
 նոյն աշնան մէջ թափած տերեւները
 համրել՝ որ մեռածներն ալ հաշուէ :
 Ես աս գիտեմ որ աս ցաւալի հունձ-
 քը առատ էր, և ասոր վրայ չեմ տա-
 րակուսիր թէ ճշմարիտ չըլլայ, վասն
 զի աս հունձքը միշտ առատ կ'ըլլայ,
 ոչ չորութենէ կ'առնէ՝ ոչ անձրեւէ :
 Լք ալ գիտեմ, և դուք ալ կրնաք գիտ-
 նալ, որ ամէն տեսակ բոյս կայ եղեր
 մէջը . մատղաշն ալ՝ աճածն ալ, նոր
 ծլածն ալ՝ ծերացածն ալ, ծաղկածն
 ալ՝ փտտածն ալ . և ամէն տեղէ քա-
 ղուած են, լեռներուն գլխէն, ձորե-
 րու ծոցէն, երկրիս խորէն, ջրի ե-
 գերքներէն, անապատ աւազուտ դաշ-
 տէն և ինչուան ծովուն սահեցուն ա-
 լիքներուն վրայ ծփած ճամբորդ տնե-
 րէն . մէկ խօսքով, թերեւս աս հունձ-
 քը անանկ ընդհանուր եղած է, որ
 հիմա սա կարգացողներուն մեծ մասը
 իրենց դաշտէն, մնացածներն ալ ի-
 րենց դրացւոյն դաշտէն տունկ մը
 խլած պակսած տեսնեն . անանկ որ
 աս յիշելն ալ ինծի անգթութիւն մը
 պիտի սեպէի, թէ որ չգիտնայի թէ
 իմ քրիստոնեայ ընթերցողներս կը
 հաւտան որ ան խլած տունկերը հի-
 մա լաւագոյն տեղ մը տնկուեր են :
 Վանք մեր անցած տարւոյն հնձո-
 ցը վրայ : Վիտենք որ անոնք ամէնքն
 ալ ան սուր և անդադար մանգաղին
 տակը մէկ կերպով կ'իյնան, և ժողով-
 ղին կապած տրցակին մէջ՝ ամենեւին
 հաւասար են . բայց մենք ադամոր-
 դիքս այնչափ երկրիս ընդունայնու-
 թեամբը մտքերնիս պղտորած ենք